



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՄՆԻՍԱԳՅԻՆ ԱՄԵՐԻԿԱԳՅԻ ԱՐԵՒՍՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745
E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



ԹԵՄԻՍ ԱՌԱՋՆՈՐԴ ԲԱՐՁՐ. Տ. ՄՈՒՀԵՂ ԱՐՔ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ ՊԵՅՐՈՒԹ ՄԵԿՆԵՑԱՒ

Այսու կը հաղորդենք մեր բարեպաշտ ժողովուրդին, թէ Ս. Աթոռոյս Գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի հրաւերով, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Ա. Արք. Մարտիրոսեան շաբաթասկիզբին Պէյրուս մեկնեցաւ: Առաջնորդ Սրբազանը Կիրակի, 9 Մարտին, Ս. Գրիգոր Լուսաւորիչի Մուտն ի Վիրապ տօսին առիթով, որ է նաեւ «Անթիլիասի Ուխտի օր»ը, Ս. Պատարագ պիտի մատուցանէ եւ պիտի քարոզէ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ, իր աղօթքներուն մէջ յիշելով նաեւ մեր Թեմի հաւատացեալները:

Առաջնորդ Սրբազանը Լոս Անճելըս պիտի վերադառնայ Ծաղկազարդի նախօրեակին, որպէսզի Ծաղկազարդը, Աւագ Շաբաթն ու Ս. Յարութեան Չատիկը տօնախմբէ մեր Թեմի հաւատացեալներուն հետ:

PRELATE DEPARTS FOR LEBANON

We hereby announce to our faithful parishioners that upon the invitation of H.H. Aram I, Catholicos of the Great House of Cilicia, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, departed for Beirut, Lebanon at the beginning of the week.

On Sunday, March 9, the Prelate will celebrate Divine Liturgy and deliver the sermon at St. Gregory the Illuminator Mother Cathedral in Antelias on the occasion of the Feast of St. Gregory the Illuminator's Descent into the Pit, which is also the Antelias Pilgrimage Day.

The Prelate will return to Los Angeles in time to celebrate Palm Sunday, Holy Week, and Easter with our Prelacy faithful.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹԵԱՆ ԿՈՉ Կ՛ՈՒՂԸ ՀԱՅՐԵՆԻ ԺՈՂՈՎՈՐԴԻՆ

Շաբաթ Մարտ 1-ի երեկոյեան, Ազգային Առաջնորդարանին մէջ տեղի ունեցաւ Հսկումի արարողութիւն, նախագահութեամբ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի:

Արարողութեան աւարտին, անդրադառնալով Հայաստանի վերջին իրադարձութիւններուն, Առաջնորդ Սրբազանը խաղաղութեան, կայունութեան եւ համերաշխութեան կոչ ուղղեց, եւ հրաւիրեց մեր ժողովուրդի զաւակները աղօթելու, որ մեր հայրենի իշխանութիւնը ժողովրդավար սկզբունքներով, հաւատքով ու յոյսով առաջնորդէ հայրենի մեր ժողովուրդը խաղաղ եւ բարօր կեանքի:

Կիրակի, Մարտ 2-ի առաւօտուն, Ս. Քառասնից Մանկանց տօնին առիթով, Ս. Պատարագի ընթացքին, թեմիս բոլոր եկեղեցիներուն մէջ տեղի ունեցաւ «Տէր Ողորմեա»ի արարողութիւն: Առաջնորդ Սրբազան Հայրը պատարագեց եւ քարոզեց Օրէնճ Քաունթիի Սրբոց Քառասնից Մանկանց եկեղեցւոյ մէջ: Սրբազան Հայրը անգամ մը եւս բոլոր հայրենակիցներուն կոչ ուղղեց ըլլալու զգօս եւ արթուն, չտարուելու եւ չառաջնորդուելու կիրքերով, ատելութեամբ եւ իրարամերժ ոգիով, այլ գործելու փոխադարձ հասկացողութեամբ, համերաշխութեան ոգիով եւ քրիստոնէական սիրով:

Յայտնենք նաեւ, թէ Ս. Աթոռոյս Գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի որոշումով, Կիրակի, 9 Մարտին, բոլոր Թեմերու մեր եկեղեցիներուն մէջ հոգեհանգստեան աղօթք պիտի կատարուի յիշեալ դէպքերուն զոհ զացած անմեղներու յիշատակին:

PRELATE CALLS FOR PEACE AND SOLIDARITY AMONG THE ARMENIAN PEOPLE

On the evening of Saturday, March 1st, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, presided over Lenten Vigil service at the Prelacy Chapel. At the conclusion of the service, the Prelate spoke of the recent events unfolding in Armenia, calling for peace and solidarity among the Armenian people and urging the faithful to pray for the welfare of our homeland.

On the morning of Sunday, March 2nd, the Prelate celebrated Divine Liturgy and delivered the sermon at Forty Martyrs Church on the name day of the church, during which he once again called on the Armenian people to work together in harmony with mutual understanding and Christian love.

By the ordinance of H.H. Aram I, Catholicos of the Great House of Cilicia, on Sunday March 9th, requiem services will be offered in all Prelacy churches for the lives lost in the current unrest.

ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՄԱՏԱՂՕՐՅՆԷՔ ՔԱՌԱՍՆԻՑ ՄԱՆԿԱՆՑ ԵԿԵՂԵՑՄՈՅ ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԵԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ

Կիրակի, 2 Մարտին, Սրբոց Քառասնից Մանկանց տօնին եւ Օրէնճ Քաունթիի եկեղեցւոյ անուանակոչութեան առթիւ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեան, եպիսկոպոսական հանդիսաւոր Սուրբ Պատարագ մատոյց եւ իր հոգեւոր պատգամը ուղղեց գաղութի զաւակներուն: Սուրբ Սեղանին սպասարկեցին քրիստոնէական Ղաստիարակութեան Բաժանմունքի զոյգ վարիչ Հայր սուրբերը եւ եկեղեցւոյս հոգեւոր հովիւը:

Նախքան իր քարոզը, Առաջնորդ Սրբազանը նախ անդրադարձավ Հայաստանի վերջին իրադարձություններուն, բոլորին կոչ ուղղելով խաղաղութան, կայունութան եւ համերաշխութան ուղին ընտրելու, հրաւիրելով հաւատացեալները աղօթելու հայրենիքի հզօրացման, իշխանութանց իմաստութեամբ լեցուելու եւ առաջնորդելու եւ ժողովուրդին բարօր ու խաղաղ կեանքի համար:



Առաջնորդ Սրբազանը նաեւ պատմեց 4-րդ դարուն ապրած հաւատքի ախոյեաններուն՝ Սրբոց Զառասնից Մանկանց վարքին ու նահատակութան մասին, եւ շեշտեց թէ Սեբաստիոյ նահատակներուն նման կոչուած ենք հաւատքի մեր ուխտը վերանորոգելու, հաւատքի ճանապարհորդութան մեր կեանքը ապրելու մաքուր խղճմտանքով, սրբութեամբ եւ յարատեւ աղօթելով:

Ան նաեւ վեր առաւ աղօթքին անհրաժեշտութիւնը հաւատացեալի կեանքին մէջ, աղօթքը համարելով Աստուծոյ հետ հաղորդակցելու ազդու միջոց եւ մեր խնդրանքներն ու մարդկային մեր կարիքները Ամենակալին Գահին դիմաց բերելու ա Ս. Պատարագի աւարտին եւ հոգեհանգստեան արարողութենէն ետք, Սրբազան Հայրը նախ կատարեց օրհնութիւնը նորակառոյց Առաջնորդական գահին, բարերարութեամբ Տէր եւ Տիկին Բարսեղ եւ Մարի Եղմուրեանի:

Ապա շրջապատուած հոգեւորականաց եւ դպրաց դասերով, Առաջնորդ Սրբազանը թափօրով առաջնորդուեցաւ եկեղեցւոյ կողքին գտնուող «Ղուկասեան» սրահը, ուր օրհնեց եկեղեցւոյ անուանակոչութեան տօնին առիթով պատրաստուած Մատաղը: Արարողութիւններէն ետք տեղի ունեցաւ սիրոյ ճաշ:

դերս:

Սիրոյ ճաշի ընթացքին գնահատանքի եւ շնորհակալութեան խօսքով հանդէս եկան եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տ. Հրանդ Զիւլ. Երեցեան եւ Ազգային Վարչութեան ատենապետ Տոքթ. Կարօ Յակոբեան:

Վերջին խօսքը արտասանեց Առաջնորդ Սրբազանը. ան բարձր գնահատեց Օրէնճ Զաունթիի ծխական մեծ ընտանիքը եւ հրաւիրեց բոլորը, որ յառաջիկայ Յունիսին պատրաստուին տօնելու եկեղեցւոյ կառուցման 20-ամեակը:

CELEBRATION OF THE NAME DAY OF FORTY MARTYRS CHURCH

On Sunday, March 2nd, the Feast of the Forty Martyrs and the name day of Forty Martyrs Church in Orange County were celebrated with Episcopal Divine Liturgy celebrated by H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, who also delivered the sermon. The Prelate was assisted at the altar by

Christian Education Department Directors Very Rev. Fathers Muron Aznikian and Barthev Gulumian.

Prior to his sermon the Prelate spoke of the events unfolding in Armenia and urged the faithful to pray for peace and stability. The Prelate began his sermon by extolling the life and martyrdom of our champions of faith, the Forty Martyrs, who gave their lives for their faith and their deep love of our Lord Jesus Christ, and asserted that like the Forty Martyrs, we too are called to renew our faith and to live our lives with conscience and prayer. The Prelate also emphasized the importance of prayer as a means of communicating with God and bringing before Him our supplications.



At the conclusion of Divine Liturgy and requiem services, the Prelate conducted the blessing of the new Bishop's Throne which was sponsored by Mr. and Mrs. Parsegh and Marie Yaghmourian. He was then led in a procession to "Gugasian" Hall where he blessed the *madagh*. During the reception that followed, congratulatory remarks were delivered by parish pastor Rev. Fr. Hrant Yeretsian and Executive Council Chair Dr.

Garo Agopian.

Closing remarks were offered by the Prelate during which he commended the members and servants of the church for their work in advancing the parish.

ՆԿԱՐՉԱԿԱՆ ՑՈՒՑԱՅԱՆԴԵՍ ԵՒ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ

Կազմակերպութեամբ Մաշտոց Գոլէճի, Կիրակի, 9 Մարտին կ.ա. ժամը 11-Էն մինչեւ կ.ե. ժամը 6:00 նկարչական ցուցահանդես մը տեղի պիտի ունենայ Կլենտոնի Presbyterian եկեղեցւոյ մէջ:

Իսկ երեկոյեան ժամը 6-ին նոյն եկեղեցւոյ մէջ տեղի պիտի ունենայ երաժշտական ձեռնարկ մը:

Յանուն Առաջնորդ Սրբազան Զօր, Արժ. Տ. Աշոտ Քհնյ. Գամպուրեան ներկայ պիտի ըլլայ զոյգ ձեռնարկներուն եւ պիտի փոխանցէ Առաջնորդ Սրբազան Զօր օրհնութեան խօսքը:

EXHIBITION AND CONCERT ORGANIZED BY MASHDOTS COLLEGE

The administration of Mashdots College has organized an art exhibit and a concert to take place on Sunday, March 9th. The exhibition, which will feature paintings by Melik Ghazarian, will start at 11:00 a.m. until 6:00 p.m. A sacred music concert will follow at 6:00 p.m. featuring prominent Armenian singers.

Rev. Fr. Ashod Kambourian will attend and convey the Prelate's blessings.

ՔԱՅԱՄ-Ի ՓԱԿՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ

Հ.Մ.Ը.Մ.-ի Շրջանային Վարչութեան նախաձեռնութեամբ, Կիրակի, Մարտ 9-ին կ.ե. ժամը 4:30-ին, Կլենտէյլ Գոլէճի մարզադաշտին մէջ տեղի պիտի ունենայ ՔԱՅԱՄ-ի խաղերու փակման հանդիսութիւնը:

Յանուն Առաջնորդ Սրբազան Զօր, Արժ. Տ. Արտակ Թիւրք. Տեմիրճեան ներկայ պիտի ըլլայ փակման հանդիսութեան եւ պիտի փոխանցէ Առաջնորդ Սրբազանին օրհնութեան խօսքը:

CLOSING CEREMONY OF KAHAM GAMES

On the afternoon of Sunday, March 9th, the closing ceremonies of the Homenetmen Kaham games will take place at Glendale College.

Rev. Fr. Ardag Demirjian will attend and convey the Prelate's message.

ԿԼԵՆՏԵՅԼԻ ՀԱՅ ԿԵԴՐՈՆԻՆ Ի ՆՊԱՍՏ ՁԵՌՆԱՐԿ

Ուրբաթ, 7 Մարտի երեկոյեան, ճաշկերոյթ մը տեղի պիտի ունենայ Կլենտէյլի Renaissance ճաշարանին մէջ, կազմակերպութեամբ Հայ Մշակութային Միութեան Կլենտէյլի մասնաճիւղին:

Ձեռնարկին հասոյթը պիտի յատկացուի «Գրիգոր եւ Մարիամ Գարամանուկեան» երիտասարդական հայ կեդրոնի շինարարութեան:

Յանուն Առաջնորդ Սրբազան Զօր, Արժ. Տ. Վազգէն Թիւրք. Աթմաճեան ներկայ պիտի ըլլայ ձեռնարկին եւ պիտի փոխանցէ Առաջնորդ Սրբազան Զօր յաջողութեան խօսքը եւ օրհնութիւնները: Ձեռնարկին ներկայ պիտի ըլլայ նաեւ Ազգային Վարչութեան ներկայացուցիչ Տիար Միւր Տէր Յովաննէսեան:

ARMENIAN CULTURAL FOUNDATION FUNDRAISER

The Glendale chapter of the Armenian Cultural Foundation has organized a fundraiser to take place on the evening of Friday, March 7th, at Renaissance Restaurant in Glendale. The proceeds will benefit the constructing of the "Krikor and Mariam Karamanougian" youth center in Glendale.

Rev. Fr. Vazken Atmajian will represent the Prelate and convey his well wishes. Executive Council member Meher Der Ohannesian will represent the Council.